

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Տեքստուրլդ ՍՊԸ-ն ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊԶԲ-24/36-Ա ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	Տեքստուրլդ ՍՊԸ	<p>ՀՀ դրոշ /1.5x3մ/. ՀՀ դրոշ (1.5x3մ)՝ եռագույն, վերևից ներքև ձգվող կարմիր, կապույտ, նարնջագույն հորիզոնական հավասար շերտերով, կտորը «Կաբարդին» տեսակի: Գործվածքը՝ անջրաթափանց, բաղադրությունը՝ 100% պոլիէսթեր, խտությունը՝ ոչ պակաս 160 գ/մ²-ից:</p> <p>Դրոշի լայնության և երկարության չափերի հարաբերությունը պետք է լինի 1:2-ի: Դրոշի երկարության և լայնության շեղումը չպետք է գերազանցի ±2%-ը: Դրոշի պաստառի եզրերը պետք է մշակված լինի երեսակողմից չերևացող զարդակարով, որից հետո՝ 0,3-ից մինչև 1,0 սմ լայնությամբ փակ կարվածքով (հարթակարով): Կարը պետք է լինի ամուր, ուղիղ, կարի ծայրերը պետք է ամրացված լինեն հետադարձ կարով՝ 0,7 սմ ոչ պակաս երկարությամբ: Դրոշը պետք է կարված լինի շերտի գույնի կամ թափանցիկ կարի թելերով: Երեք շերտից կարված դրոշը պետք է կցակարված լինի տարբեր թելերով՝ վերևի և ներքևի շերտերի գույներին համապատասխան: Դրոշի ամրացման եղանակը՝ եզրակի օգնությամբ: Եզրակի լայնությունը՝ 3,0-ից մինչև 3,5 սմ:</p> <p>Այլ պայմաններ. *Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Մատակարարը՝ իր միջոցներով և իր հաշվին: **Մատակարարված ապրանքը պետք է լինի նոր՝ չօգտագործված, առանձին փաթեթավորված: Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային պարկերով, յուրաքանչյուր պարկի մեջ մեկ հատ, պիտակավորված, պիտակի վրա պետք է նշված լինի</p>

		<p>տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: ***Հրավերով մասնակցից պահանջել առաջարկվող ապրանքի արտադրողի անվանումը և տեխնիկական բնութագիրը: ****Ընթացակարգն իրականացվում է համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի 6-րդ մասի: *****Դրոշները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության պետական դրոշի ՀՍՏ 50-2012 ստանդարտի պահանջներին:</p>
--	--	---

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Тексуорлд в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/36-Ա ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
2		